# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

Շբ. 1 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 2 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան երաշխաւոր Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ըստ սովորութեան պատարագեց եւ քարոզեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան. հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Բշ. 3 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Գշ. 4 Սեպտ.— Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագեց Տաճարին Տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 8 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 9 Սեպտ.— Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն 6 Սեպտեմբերին տաճարին ընդհանուր մաքրութեան մասնակցողներուն հանգուցեալ հարազատներուն հոգիին ի հանգիստ որոնց ցանկը կարդաց Տաճարին տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

Շբ. 15 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 16 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Եշ. 20 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

Ուր. 21 Սեպտ.— Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին դէպի տաճար: Օրուան Ս. Պատարագը մատոյց Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շբ. 22 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրաճեան:

Կիր. 23 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Շբ. 29 Սեպտ.— Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

– Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Ապա կենաց Փայտի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

– Լուսարարապետ Սրբազանը հանդիսապետեց գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ հսկման կարգերուն:

Կիր. 30 Սեպտ.— Տօն Վերացման Ս. Խաչին: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

Կատարուեցաւ Գոհաբանական Մաղթանք Հայաստանի Հանրապետութեան անկախացման Ժ. տարեդարձի առիթով, Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

– Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը Նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ին:

Բշ. 1 Հոկտ.— Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Տ. Բագրատ Արդ. Պուրճէքեան:

Շբ. 6 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 7 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան

digitised by A.R.A.R.@

մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Ընծանուէր Արք. Բարախանեան:

Ուր. 12 Հոկտ.– Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ վանքի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Շբ. 13 Հոկտ.– Ս. Գէորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան, որ «Հայր Մեր»էն առաջ քարոզեց: Ժամարարն էր Տ. Իսահակ Արք. Մինասեան:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 14 Հոկտ.– Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ երկրորդ պաշտօնական մուտքէն յետոյ, Տ. Արիս Եպս. Շիրվանեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Շբ. 20 Հոկտ.– 72 Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Կիր. 21 Հոկտ.– Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Եաֆայէն եւ Երուսաղէմէն մասնակցող հաւատացեալներու: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան:

Ուր. 26 Հոկտ.– Սրբոց Թարգմանչաց նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շբ. 27 Հոկտ.– Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Տօն Ազգային եւ Եկեղեցական:

– Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

– Ս. Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն բարերարներ, Գալուստի, Նուարդի, Սարգսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներու հոգիներուն ի հանգիստ: Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 28 Հոկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շբ. 3 Նոյ.– Ս. Զօրաց Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Կիր. 4 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արք. Իփրանեան:

Բշ. 5 Նոյ.– Ըստ սովորութեան, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վաչիկ Վրդ. Մանկասարեան:

Շբ. 10 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Զաքարեան:

– Կէսօրէ ետք Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի Այրի ուխտերէն ետք, վերջինիս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր: Թափօրապետն էր Տ. Վաչիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 11 Նոյ.– Գիւտ Ս. Խաչի (326): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Լուսարարապետ Սրբազանին երկրորդ մուտքէն ետք, այս եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Նորայր Արք. Գազազեան:

Ս. Պատարագէն ետք կազմուեցաւ

digitised by A.R.A.R.@

մեծահանդէս թափօր, իջնելով նախ Դիտ Խաչի Այրը եւ բարձրանալով Ս. Գերեզմանի շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջը եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը կը գլխաւորէր Լուսարարապետ Սրբազանը, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, թափօրով արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շբ. 17 Նոյ.– Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 18 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուր. 23 Նոյ.– Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Շբ. 24 Նոյ.– Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Աբղ. Աթաջանեան:

Կիր. 25 Նոյ.– Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Իսահակ Աբղ. Մինասեան: Քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգիստ, Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան անդամներուն հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 1 Դեկտ.– Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 2 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Աւետիս Աբղ. Իփրաճեան:

Բշ. 3 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Գշ. 4 Դեկտ.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Տ. Կոմիտաս Վրդ. Շէպէրթճեան հանդիսապետեց Բարեբար Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի ննջեցելոց տարեկան հոգեհանգստին:

Շբ. 8 Դեկտ.– Գրիգորի Սքանչելագործին. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Մինաս մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 9 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Աբղ. Զաքարեան:

Սեպտ. 22ին Ս. Էջմիածնի մէջ օրհնուած Սուրբ Միւռոնէն, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսը փոքրիկ, գեղաքանդակ պահպանակ-կաթսայով առաքեց բոլոր եկեղեցական կեդրոններուն:

Այս շաբթուն ուխտաւորաբար Երուսաղէմ այցելող եւ Հայաստանի Խորհրդարանի անդամ Տիար Ռուբէն Միրզախանեանի միջոցաւ ստացուած Ս. Միւռոնը, Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Յակոբ Մայր Տաճար իջեցուց: Եւ Ս. Պատարագի վերջաւորութեան, «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողութեամբ Ս. Միւռոնը Աւանդատունէն բերուեցաւ Ատեան: Պատրիարք Սրբազան Հայրը գայն ընդունեց եւ տեղաւորեց պատրաստուած սեղանին վրայ: Տ. Արիս Եպս. Շիրվանեան բացատրութիւններ տուաւ Ս. Միւռոնի Խորհուրդին եւ Ս. Էջմիածնի մէջ կատարուած Միւռոնի օրհնութեան արարողութեան մասին: Նկարագրեց գեղաքանդակ կաթսային վրայ եղած արձանագրութիւնը՝ «Յոբելեանական Միւռոնօրհնէք 1700 Ս. Էջմիածին Սեպտեմբեր 2001» եւ «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց»: Իսկ Կաթսային շուրջը քանդակուած են Ս. Էջմիածնի Տաճարը 301-303, Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը, Ս. Գեղարդը, եւ Ս. Հոգին խորհրդանիշ Աղաւնի:

Յետ «Պահպանիչ» մաղթանքին եւ «Հայր Մեր»ի խմբական երգեցողութեան, Պատրիարք Սրբազան Հայրը հրաւիրեց Միաբանութիւնը եւ հաւատացեալները ի համբոյր Ս. Միւռոնին:

Ուր. 14 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 15 Դեկտ. Առաքելոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 16 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Շբ. 1 Սեպտեմբեր.— Լոս Անճելըսէն, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի Բարեկամներ» միութեան Ատենապետ Դատաւոր Արման եւ Տիկին Նէնսի Արապեաններ շաբաթական այցով մը հիւրընկալուեցան:

Շաբաթ երեկոյեան ժամը 7:30ին, ժառանգաւորաց փոքր դահլիճին մէջ տեղի ունեցաւ յայտագիր ի պատիւ հիւրերուն: Պատրաստուած հանդէսին հրաւիրուած էին զոյգ վարժարաններու ուսուցչական կազմը: Ժառանգաւոր սաներու գեղարուեստական եւ երաժշտական յայտագիրէն վերջ, Տիկին Սիլվա Նաթալի Մանուկեան (Երուսաղէմ կը գտնուէր Մատենադարանի հարցերով) ներկայացուց պատույ հիւրերուն կենսագրականը: Պատրիարք Սրբազան Հայրը պարգեւատրեց Դատաւոր Արման Արապեանը «Սուրբ Յակոբ» շքանշանով: Դատաւոր Արման Արապեան իր շնորհակալութեան խօսքը յայտնեց՝ յանուն իր եւ իր կողակցին: Պատրիարք Սրբազան Հայրը գնահատանքով նշեց որ «Հայկական Մշակոյթի եւ Գիտութեան Գանձարան» հանդիսացող Մատենադարանը միշտ ալ կարիք ունի նման ուշադրութեան, որովհետեւ այն ազգային մեծագոյն արժէքներու շարքին կը պատկանի:

Եշ. 11 Հոկտեմբեր.— Երեկոյեան, Սպանիոյ Ազգային Օրուան տօնակատարութեան առթիւ, Երուսաղէմի մէջ Ընդհանուր Հիւպատոս Սալազարին հրաւէրով, իրենց յարկին տակ կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շբ. 15 Սեպտեմբեր.— Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ Նորընտիր Պատրիարք Ամեն. Տ. Իրինէոսի գահակալութեան արարողութեան ներկայ գտնուեցաւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, Ս. Յարութեան Տաճարէն ներս, «Կաթողիկոն» Յունաց Մայր Եկեղեցւոյ մէջ: Արարողութիւնը եւ շնորհաւորական ուղերձները տեւեցին երեք ժամ:

Նոյն երեկոյեան, վերոյիշեալ առիթով տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք King David պանդոկին մէջ, Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան, Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, Տ. Գուսան Վրդ. Ալճանեան, Տ. Բագրատ Արդ. Պուրճէքեան, Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 21 Հոկտեմբեր.— Երեկոյեան, Հռովմի Քահանայապետի գահակալութեան 23րդ տարեդարձին առիթով, Պապական Նուիրակ Տ. Պիեթրօ Արք. Սամպիի հրաւէրին ընդառաջելով, Երուսաղէմի Նոթըր Տամ Կեդրոնին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Արիս Եպս. Շիրվանեան, Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Տ. Գուսան Վրդ. Ալճանեան եւ Տ. Բագրատ Արդ. Պուրճէքեան:

Գշ. 23 Հոկտեմբեր.— Առաւօտեան, Երուսաղէմի քրիստոնեայ եկեղեցիներու կողմէ նախաձեռնուած «Համերաշխութեան Կոչ» քայլերթին, Ռաֆէլի Գերեզմանէն մինչեւ Բեթղեհէմի Ծննդեան Տաճար, իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայոց Պատրիարքութիւնը յանձինս Տ. Արիս Եպս. Շիրվանեանի (Արտաքին եւ Էքիւմենիկ յարաբերութիւններու պատասխանատու), որուն կ'ընկերանային Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Եշ. 8 Նոյեմբեր.— ՀՅԴ Կուսակցութեան 111 ամեակի հանդիսութեան Երուսաղէմի Հ.Մ.Ը. Միութեան ակումբին մէջ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներու: Փակման խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց Հայաստանէն Երուսաղէմ նոր ժամանած հիւրը՝ ՀՅԴի Կուսակցութեան աւագ անդամներէն Տիար Կիրօ Մանոյեան, Կուսակցութեան ցանկանալով արդիւնաւոր եւ հայրենասիրական գործունէութիւն:

Հայրական օրհնութենէն ետք երգուեցաւ «Հայր Մեր»ը, ապա 111 Ամեակի Կարկանդակի հիւրասիրութեամբ աւարտեց հանդիսութիւնը:

Եշ. 15 Նոյեմբեր.— Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Հայֆայի եւ Եաֆայի Առժամեայ Հովիւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեանի Հայֆա մեկնեցաւ երկու օրով: Հայֆայի մէջ այցելեց կրօնական պետերուն, մեր Ս. Եղիա եկեղեցին եւ կալուածքը, որ վտանգուած է:

Հինգշաբթի երեկոյեան, հանդիպում ունեցաւ Հայֆայի հայ համայնքին հետ Հ.Մ.Ը. Միութեան սրահին մէջ, ուր կատարուեցաւ երեկոյեան պաշտամունք, եւ Պատրիարք Սրբազանը դպիր Աւետիս Շիրինեանին ուրար կրելու արտօնութիւն շնորհեց: Պատրիարք Սրբազան Հայրը խօսեցաւ Ս. Էջմիածնի մէջ 1700 ամեակի առիթով տեղի ունեցած հանդիսութեանց մասին: Անդրադարձաւ Ս. Եղիա եկեղեցիին հետ կապուած շինարարական հարցերուն, եւ կրթական ու մշակութային աշխատանքներուն:

digitised by A.R.A.R.@

Ուր. 7 Դեկտեմբեր.— Երուսաղէմի ՌԱԿի Էօժէն Բարագեան Ակումբի եւ ՀԵՄի ջանքերով կազմակերպուած, ՌԱԿ Կուսակցութեան 80 ամեակի հանդիսութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներու, որ տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն ներս: Փակման խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց Կուսակցութեան պատույ հիւր ՀՌԱԿի Ատենապետ Տիար Ռուբէն Միրզախանեանը եւ «Այգեստան» Ընկերութեան Ատենապետ Տիար Արմէն Ստեփանեանը, մաղթելով որ Կուսակցութիւնը շարունակէ հետապնդել Հայրենիքի Հետ, եւ Ժողովուրդին Համար նշանաբանը, արդիւնաւորելու համար իր օգտակար ծառայութիւնը նաեւ ապագային:

Մոմավառութեան եւ 80 Ամեակի Հանդիսութեան Կարկանդակի հիւրասիրութենէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը օրհնութեամբ արձակեց ներկաները:

Շր. 8 Դեկտեմբեր.— Միացեալ Նահանգաց Ընդհանուր Հիւպատոս Ռոնալտ Շլիչըրի հրաւէրին ընդառաջելով, Քրիսմըսի տօնին առիթով հիւրասիրութեան ներկայ եղաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Գշ. 11 Դեկտեմբեր.— Երուսաղէմի քաղաքապետ Էհուտ Օլմէրթի հրաւէրով, Իսլամական, Հրէական եւ Քրիստոնէական տօներու առիթով տրուած ընդունելութեան եւ մոմավառութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Դշ. 12 Դեկտեմբեր.— Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Ընծանուէր Արք. Բարախանեանի (Առժամեայ Հովիւ Եափայի եւ Հայֆայի) տեսակցութիւն ունեցաւ Հայֆայի քաղաքապետին հետ, որու ընթացքին քննարկուեցան շարք մը հարցեր: Ներկայացուեցան մեր ունեցած շէնքին վտանգուած ըլլալու կացութիւնը եւ մեր կարիքները՝ եկեղեցի, դպրոց, եւ համայնքային կեդրոն ունենալու: Քաղաքապետը բարեացակամութիւն յայտնեց ներկայ շէնքը քննելու եւ ուսումնասիրելու:

Եշ. 13 Դեկտեմբեր.— Ս. Ծնունդի եւ Ռամատանի առիթով PLO Խորհրդարանի անդամ Տքթ. Էմիլ Ճարճուիի կողմէ «Քրիսմըս» պանդոկին մէջ տրուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Արիս Եպս. Շիրվանեան եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Գշ. 18 Դեկտեմբեր.— Ընդառաջելով Սպանիոյ Ընդհանուր Հիւպատոս Սալազարին կողմէ տրուած Ս. Ծննդեան հիւրասիրութեան, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի ներկայ գտնուեցաւ երեկոյթին:

digitised by A.R.A.R.@